



Թբիլիսիի Սուրբ Պետրոս եկեղեցու երգչախմբում, իսկ այսօր «Հայարտան» նախաձեռնությամբ կազմակերպվող գրեթե բոլոր համերգներին նա ներկայանում է իր գեղեցիկ կատարումներով:

- *Ես ուրախ եմ, որ վրացական միջավայրում եմ հասունանում,- երախտագիտությամբ* ՕՕՕՕ Օ ՕՕՕՕ,

- *որովհետեւ վրաց ժողովուրդը մշակութային հարուստ ու առանձնահատուկ պատմություն ունի, եւ միայն իրեն հատուկ ձեռագրով է տեսանելի դառնում յուրաքանչյուր երկրում: Ուստի դպրոցն ավարտելուց հետո, շարունակեցի ուսումնս երաժշտական հենց նույն գիմնազիայում (Ավթո Ռեիշվիլու դասարան), որ վերակազմավորվել էր արդեն որպես ուսումնարան: Իսկ այժմ սովորում եմ Եվգենի Միքելաձեի անվան երաժշտական ուսումնարանում, վոկալ բաժնի նախապատրաստական կուրսում, պրոֆեսոր Լամարա Գոգլիչիձեի դասարանում:*

Օժտված լինելով ձայնի լիրիկական սոպրանո տեմբրով, Նինան փորձում է իրեն տարբեր ոճերում: Երգում է ինչպես ռոք, ջազ ու փոփ, այնպես էլ ժողովրդական, իսկ մոտ ժամանակներում որպես անակնկալ նախատեսում է ներկայանալ դասական ժանրում եւս: ... Այս ամենի հետ մեկտեղ Նինան ու նրա ամուսինը` Արթուրը, հրաշալի զույգ են: Հաճելի է տեսնել, թե ինչպես է Արթուրը ոգեւորում, սատարում ու աջակցում երիտասարդ իր կնոջը, դրանով ամրացնում ու արժեքավոր դարձնում շնորհալի երգչուհու ազատ ճախրանքը երգի դյուբոդ աշխարհում:

ՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ